# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀՀ,Վայոց ձորի մարզ,քաղաք Վայք
Երկու հազար տասնչորս թվականի մարտի տասնյոթին

Հայաստանի Հանրապետական Կուսակցությունը, իրավաբանական հասցեն՝ ՀՀ, քաղաք Երևան, Մելիք Ադամյան փողոց, 2 շենք, իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03 Ա 058514, տրված 17.02.2003 թ., ի դեմս կուսակցության նախագահի տեղակալ Ռ. Զոհրաբյանի, որի անունից 25.02.2014 թ. Տրված N 02-11 լիազորագրով հանդես է գալիս ԿԱՐԵՆ ԲԵՆԻԿԻ ԱՍԼԱՆՅԱՆԸ, ՀՀ քաղաքացի ,ծնված 11.08.1969 թ,անձնագիր AN0280987, տրված 03.12.2012 թ,020-ի կողմից, հաշվառված ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում,Ալավերդյան փողոց,շենք N10,բնակարան N15 հասցեում,
(այսուհետև `Վարձատու) , մի կողմից, և

„Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ,, պետական կառավարչական հիմնարկը, իրավաբանական հասցեն՝ ՀՀ, քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 13, իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի հաշվառման վկայական 01 Բ 002246, տրված 01.02.2008 թ., ի դեմս աշխատակազմի ղեկավար ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍՅԱՆԻ,որի անունից 26.02.2014 թ. Տրված N ՍՄ/ԱԳԱ-1/1455-14 լիազորագրով հանդես է գալիս Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Վայքի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, ՀՀ քաղաքացի ,ծնված 03.02.1956 թ,անձնագիր AN0656949,տրված 23.09.2013 թ,020-ի կողմից, հաշվառված ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում,Շահումյան փողոց,շենք N6,բնակարան N19 հասցեում,

(այսուհետև Վարձակալ), մյուս կողմից,
կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան.

1.Սույն պայմանագրի համաձայն Վարձատուն համապատասխան վարձավճարի դիմաց Վարձակալի տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրում հետևյալ գույքը՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում,Շահումյան փողոց 16/տասնվեց/ հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ/երկրորդ/ հարկից մի հատված՝ 61.2(վաթսունմեկ ամբ. երկու տասնորդական)քմ մակերեսով , այսուհետ՝ "Գույք",

2. Նշված տարածքը տրամադրվում է որպես գրասենյակ օգտագործելու նպատակով:

3. Տարածքը պատկանում է Վարձատուին ՝համաձայն 1437874 սեփականության իրավունքի գրանցման վկայականի , տրված 20.05.2004 թ. անշարժ գույքի կադաստրի պետկոմիտեի Վայքի տարածքային ստորաբաժանման կողմից:

4.Նշված անշարժ գույքը սույն պայմանագրի կնքման պահին վաճառված,նվիրված կամ գրավ դրված չէ,արգելանքի տակ չի գտնվում,ինչը հավաստվում է անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների մասին NUS-05032014-10-0003 տեղեկանքով,տրված ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետկոմիտեի Վայոց ձոր ստորաբաժանման կողմից 05.03.2014 թ:

## Կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

1. Վարձակալն իրավունք ունի

- տիրապետելու և օգտագործելու վարձակալած տարածքը սույն պայմանագրին և նպատակային նշանակությանը համապատասխան
- վարձակալած տարածքը իր հաշվին ենթարկելու վերանորոգման և բարելավման
- միայն Վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներով վարձակալած տարածքը ենթավարձակալության հանձնելու երրորդ անձի կամ գրավ դնելու երրորդ անձի մոտ
- պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնել `1(մեկ) ամիս առաջ տեղյակ պահելով Վարձատուին
- Վարձատուի համաձայնությամբ նախապատվության իրավունքով գնելու վարձակալած գույքը սույն պայմանագրի ժամկետի ավարտից հետո կամ մինչև ժամկետի ավարտը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 627 հոդված ):

2 Վարձակալը պարտավոր է

- ժամանակին սույն պայմանագրով սահմանված կարգով մուծել վարձավճարը,ինչպես նաև օգտագործված էլ.էներգիայի և ջրի վարձավճարը..
- թույլ չտալ վարձակալած տարածքի այնպիսի փոփոխություն, որը կհանգեցնի տարածքի բնութագրի վատթարացմանը
- վարձակալման ժամանակաշրջանում կատարել տարածքի ընթացիկ վերանորոգում.
- Պայմանագրի կնքման հետ կապված ծախսերի համար վճարում է Վարձակալը

3. Վարձատուն իրավունք ունի

- արգելելու վարձակալման իրավունքը երրորդ անձին փոխանցելը կամ զիջելը, կամ գրավ դնել երրորդ անձի մոտ
- վաղաժամկետ դադարեցնել պայմանագրի գործողությունը,եթե վարձակալը չի կատարում սույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կամ վարձակալի համաձայնությամբ՝ այդ մասին 3(երեք) ամիս առաջ տեղյակ պահելով Վարձակալին

4. Վարձատուն պարտավոր է

- չմիջամտել Վարձակալի տնտեսական գործունեությանը, եթե այն չի վնասում շրջակա միջավայրին և չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը
- Պայմանագիրը լուծելու դեպքում 1(մեկ) ամիս առաջ դրա մասին տեղյակ պահել վարձակալին.
- Տարածքը հանձնել Վարձակալին 5(հինգ)օրվա ընթացքում:

5. Վարձավճարը.

- Տարածքի վարձակալման վարձավճարը կազմում է 72 000 (յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ յուրաքանչյուր եռամսյակի համար , 288 000(երկու հարյուր ութսունութ հազար)ՀՀ դրամ տարեկան,ներառյալ հարկերը,.
- Տարածքի վարձավճարի դրույքաչափի փոփոխման դեպքում Վարձատուն պարտավոր է նոր դրույքաչափի մասին նախօրոք գրավոր տեղյակ պահել Վարձակալին : Տարածքի վարձավճարի դրույքաչափի աճի դեպքում վարձավճարի չափը ենթակա է կիրառման ոչ շուտ, քան դրա մասին գրավոր տեղեկացվելուց տասնհինգ օր անց: Վարձավճարի փոփոխման դեպքում կողմերը կարող են դադարեցնել սույն պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Վարձակալական ընթացիկ վճարումները Վարձակալի կողմից կվճարվեն անկանխիկ , Հայաստանի Հանրապետական կուսակցության, <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ 1150000283610100 հաշվեհամարին, ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա վերջին աշխատանքային օրը:

6. Պայմանագրի ժամկետը.

- Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում սահմանված կարգով անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման պահից և գործում է 5(հինգ) տարի ժամկետով:
- Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կամ փոփոխվել կողմերի համաձայնությամբ, գրավոր:

7. Պայմանագրի դադարումը.

Սույն պայմանագիրը դադարում է

- պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում
- կողմերի փոխադարձ համաձայնությամբ
- կողմերից մեկի պահանջով միակողմանի լուծարելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

8. Եզրափակիչ դրույթներ

- Սույն պայմանագիրը կնքվում է 4/չորս/ համազոր օրինակներից, որոնցից մեկական օրինակը պահպանվում է կողմերի մոտ, մեկը՝ Վայք նոտարական տարածքի նոտարի գործերում և մեկը ներկայացնելու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետկոմիտեի ցանկացած սպասարկման գրասենյակ:
- Սույն պայմանագիրը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար:
- Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՎԱՐՁԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետական Կուսակցություն
հասցե՝ ՀՀ,ք.Երևան,Մելիք Ադամյանի 2,

Լիազորված անձ՝ [signature]

[handwritten name]

ՎԱՐՁԱԿԱԼ

„Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ„ ՊԿՀ

հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փողոց 13,

Լիազորված անձ [signature]

[handwritten name]

Երկու հազար տասնչորս թվականի մարտի տասնյոթին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Վայք նոտարական տարածքի նոտար Օլյա Վանիկի Գասպարյանիս կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը,ներկայացուցիչների լիազորությունները, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետական Կուսակցության իրավունքները ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում N 191 - ով
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների

Նոտար՝ [signature] Օ.Վ.Գասպարյան